«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2012 թ.

Բովանդակություն

1. Ներածություն 3

2. Որակի ապահովման արտաքին համակարգ 4

2.1 Միջին մասնագիտական կրթության համակարգ 5

2.2 Բարձրագույն կրթության համակարգ 5

3. Շահակիցների հետ փոխհարաբերություններ 6

4. ՈԱԱԿ-ի որակի ապահովման ներքին համակարգ 7

5. Միջազգայնացում 8

6. Զարգացման միտումներ և մարտահրավերներ 9

1. Ներածություն

ՈԱԱԿ- ը ստեղծվել է 2008 թվականի նոյեմբերին ՀՀ Կառավարության թիվ 1486-Ն որոշմամբ: Ստեղծման օրվանից ՈԱԱԿ-ը որդեգրել է հետևյալ առաքելությունը, որը հետևողականորեն իրականացնում է՝

Նպաստել հանրության վստահության ձևավորմանը, սոցիալական համախմբվածությանը, հավասարությանը, պատասխանատվությանը և մրցունակությանը մասնագիտական կրթական ծառայությունների որակի պարբերաբար բարելավման միջոցով:

ՈԱԱԿ-ն իր առաքելությունն իրականացնում է.

- բավարարելով շահակիցների պահանջները պարտադիր ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) և կամավորության սկզբունքով իրականացվող ծրագրային հավատարմագրման միջոցով,
- համաձայնեցնելով «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները» ընդունված միջազգային չափանիշներին և չափորոշիչներին,
- երաշխավորելով միջազգային ճանաչելիությունը, ինչը կնպաստի Եվրոպայում ՀՀ մասնագիտական կրթության ամուր հիմքերի հաստատմանը,
- արժևորելով շահակիցների հետ սերտ համագործակցությունը որակի ապահովման համակարգի զարգացման գործում:

ՈԱԱԿ-ի որակի ապահովման մոտեցումներն արտացոլված են ՀՀ կառավառության կողմից հաստատված հավատարմագրման չափանիշներում, չափորոշիչներում և ընթացակարգերում: Այս մոտեցումները կառուցված են հետևյալ հիմնական հասկացությունների վրա՝ հանրության վստահություն, սոցիալական համախմբվածություն, հավասարություն, հանրային պատասխանատվություն և մրցունակություն:

2008-2012 թվականների ընթացքում ՈԱԱԿ-ը ձևավորել է ամուր հիմքեր որակի ապահովման ինչպես արտաքին, այնպես էլ ներքին մեխանիզմների մշակման, գործարկան և պարբերաբար բարելավման համար:

ՈԱԱԿ-ը ձևավորվել է որպես մի կառույց, որը վստահություն է ներշնչում թե՛ ներքին և թե՛ արտաքին ու միջազգային շահակիցներին:

Ներքին ուղղվածություն՝ չորս տարիների ընթացքում իրականացրած լայնածավալ աշխատանքների արդյունքում ՈԱԱԿ-ը կայացել է որպես արտաքին գնահատում իրականացնող կառույց: Որպես բնականոն զարգացման արդյունք 2012 թվականին անհրաժեշտություն առաջացավ

վերանայել ՈԱԱԿ-ի կառուցվածքը, ձևավորման փուլից անցնելով որակի ապահովման արտաքին մեխանիզմների իրական գործարկմանը:

Արտաքին ուղղվածություն՝ մասնագիտական կրթության համակարգում կատարվել են զգալի փոփոխություններ՝ մասնագիտական ուսումնական հաստատությունների մեծ մասը որակի ապահովման ներքին մեխանիզմների մշակման և ներդրման փուլից անցել է ինքնավերլուծության իրականացմանը, իսկ որոշ բուհեր արդեն անցել են փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրում: Այսպիսի միտումը վկայում է, որ մասնագիտական կրթության համակարգում սկսվել է շարժում, որը նպաստում է ուսումնական հաստատությունների կառավարման մոտեցեումների վերանայմանը:

Միջազգային ուղղվածություն՝ ՈԱԱԿ-ը, միջազգային մակարդակում ակտիվ մասնակցելով տարբեր նախաձեռնությունների, ստեղծել է ամուր հիմքեր 2014 թվականին ENQA–ի միջազգային ճանաչմանը դիմելու համար:

2. Որակի ապահովման արտաքին համակարգ

Մասնագիտական կրթության որակի ապահովման արտաքին գնահատման ոլորտում գրանցվել են զարգացումներ հետևյալ ուղղություններով.

- ՈԱԱԿ- ը ՀՀ ԿԳ նախարարության հետ համատեղ.
  - մշակել է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,
  - պատրաստել է ՀՀ Կառավարության որոշման նախագիծ «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

  Այդ մշակումները և փոփոխությունները միտված են նպաստելու «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի գործունեության անկախությանը և այն դարձնել համահունչ միջազգային պահանջներին:

- ՈԱԱԿ-ը մշակել է համապատասխան փաստաթղթային հենք հավատարմագրման հանձնաձողովի ստեղծման համար: ՈԱԱԿ-ի կողմից լրամշակվել են «Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգը», «Փորձագիտական խմբերի ձևավորման կարգը» և փորձագետների տվյալների բազան: Լրամշակումները միտված են ապահովելու հավատարմագրման գործընթացի թափանցիկությունն և վավերականությունը:

- ՈԱԱԿ-ն իրականացրել է մասնագիտական կրթության համակարգի որակի ապահովման զարգացումների ամբողջական վերլուծությունը, որի արդյունքները հրապարակվել են երկու լեզուներով (անգլերեն և հայերեն)։
- ՈԱԱԿ-ի աշխատակիցները Համաշխարհային բանկի (ՀԲ) «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ ծրագրի շրջանակներում ուսումնասիրել են դրամաշնորհային հայտերը և տվել մասնագիտական կարծիք: Այժմ իրականացվում է ծրագրի իրականացման մոնիտորինգ:

2.1 Միջին մասնագիտական կրթության համակարգ

Միջին մասնագիտական կրթության համակարգում 2012 թ. ՈԱԱԿ-ն իրականացրել է ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) հավատարմագրման փորձարկում երեք միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ Երևանի տարածաշրջանային №1, Երևանի տարածաշրջանային №2 և Երևանի «Էրեբունի» պետական բժշկական քոլեջներում: Գործընթացները կազմակերպվել են, միայն տեղացի փորձագետների մասնակցությամբ, հավատարմագրման կարգով սահմանված ընթացակարգին համապատասխան՝ ուսումնական հաստատություններն իրականացրել են ինքնավերլուծություն՝ ՀՀ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների համաձայն, այնուհետև ՈԱԱԿ-ի կողմից ձևավորված և համապատասխան վերապատրաստում անցած փորձագիտական խումբը կատարել է այցեր ուսումնական հաստատություններ, փորձագիտական խումբը ինքնավերլուծությունների նախնական գնահատման ու այցերի արդյունքների հիման վրա պատրաստել է փորձագիտական զեկույցներ:

2013 թ. ՈԱԱԿ-ը նախատեսում է իրականացնել փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ ևս երեք միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ նպատակ ունենալով համակարգը նախապատրաստել բուն հավատարմագրման գործընթացին:

2.2 Բարձրագույն կրթության համակարգ

ՀԲ-ի «Կրթության որակ և համապատասխանություն երկրորդ ծրագիր» շրջանակներում բարձրագույն կրթության համակարգում իրականացվել են փորձնական ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) հավատարմագրման գործընթացներ 3 բարձրագույն ուսումնական հաստատություններում. մեկ պետական՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, և երկու ոչ պետական՝ Երևանի «Գլաձոր» և Հյուսիսային համալսարաններում:

- Ագրարային համալսարանում որպես միջազգային փորձագետ մասնակցել է INQAAHE–ի նախագահ և Չիլիի Միջհամալսարանական զարգացման կենտրոնի տնօրեն Մարիա-Խոսե Լեմայտրենը:
- Երևանի «Գլաձոր» համալսարանում որպես միջազգային փորձագետ մասնակցել է Հաբրիս Հենարդը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության «Բարձրագույն կրթության կառավարում» ծրագրի ղեկավար:
- Երևանի Հյուսիսային համալսարանում որպես միջազգային փորձագետ մասնակցել է Ջագանաթ Փաթիլը՝Ասիայի որակի խաղաղօվկիանոսյան ցանցի (APQN) նախագահ:

Գործընթացներն իրականացվել են հավատարմագրման կարգին համապատասխան՝ միջազգային փորձագետների մասնակցությամբ և այժմ գտնվում են վերջնական զեկույցների կազմման փուլում:

Այժմ փորձնական հավատարմագրման գործընթացներ ընթանում են նաև հանրապետության մի շարք այլ բուհերում.

- Երևանի պետական համալսարան (ինստիտուցիոնալ և ծրագրային),
- Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան (ինստիտուցիոնալ և ծրագրային),
- Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (ինստիտուցիոնալ և ծրագրային),
- Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան (ինստիտուցիոնալ),
- Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա (ինստիտուցիոնալ):

2012 թ. մայիսին Երևանի գյուղատնտեսական համալսարանը սեփական նախաձեռնությամբ դիմել է ինստիտուցիոնալ հավատարմագրման համար և այժմ հավատարմագրման գործընթացն ընթացքի մեջ է:

Հավատարմագրման բոլոր գործընթացներն իրականացվել են ըստ ՀՀ Կառավարության կողմից հաստատված որակի ապահովման չափանիշների և ընթացակրգերի, առանց որևէ շեղումների, ինչը վկայում է ՈԱԱԿ-ի որդեգրած մոտեցումների լեգիտիմությունը և նպաստում համակարգի բարելավմանը:

3. Շահակիցների հետ փոխհարաբերություններ

ՈԱԱԿ-ը շահակիցների համար իրականացրել է զգալի աշխատանքներ որակի ապահովման ուղղությամբ .

- ARQATA ծրագրի շրջանակներում (ՀԲ «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ ծրագիր) Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալության հետ համատեղ,

լայնածավալ աշխատանքներ են կատարվել բուհերի որակի ներքին ապահովման համակարգերի ստեղծման և համապատասխան ներուժի ձևավորման ուղղությամբ: Փորձի փոխանակման նպատակով կազմակերպվել են բազմաթիվ աշխատաժողովներ, այցեր Եվրամիության բուհեր, տրամադրվել են խորհրդատվություններ որակի ապահովման համակարգի ներդրման և ինքնավերլուծության իրականացման ուղղությամբ:

Բացի բուհերի որակի ապահովման պատասխանատուներից, ՈԱԱԿ-ի աշխատակիցներից և փորձագետներից վերապատրաստում են անցել նաև ուսանողները՝ ուսումնական գործընթացի կարևորագույն շահակիցները:

- ՏԵՄՊՈՒՍ-ի (DIUS և PICQA) ծրագրերի շրջանակում իրականացվել են մի շարք լայնածավալ հանդիպումներ, ամփոփվել են DIUS դրամաշնորհային ծրագրի արդյունքները և կազմակերպվել է ամփոփիչ կոնֆերանս, որին մասնակցել են 225 հոգի:
- «Որակի շաբաթ»-ի շրջանակներում 2012 թ. հոկտեմբերի 8-9 Երևանում տեղի է ունեցել շահակիցների երկրորդ համաժողովը «Որակի ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության համակարգում» թեմայով: Շուրջ 250 շահակից, այդ թվում ազգային և միջազգային փորձագետներ, մասնակցեցին համաժողովին, որում ներկայացվեցին չորս տարիների ընթացքում ձեռք բերված նվաճումները:

ՈԱԱԿ-ը, կարևորելով ուսանողների դերը որակի ապահովման մշակույթի ձևավորման գործընթացում, «Շահակիցների հետ փոխհարաբերություններ» ծրագրի շրջանակներում 2011 թվականին ստեղծել է «Ուսանողության ձայն» աշխատանքային խումբը: Ուսանողների այդ խումբը կոչված է անցկացնել անկախ հետազոտություն ուսանողների շրջանում՝ պարզելու ուսումնառության և դասավանդման արդի խնդիրները: 2012 թվականին ավարտվել է «Բարձրագույն կրթության հայաստանյան առանձնահատկությունները. ուսանողների կարծիքի հարցում» ուսանողների հետազոտության առաջին փուլը, արդյունքները ներկայացվել են ՀՀ բարձրագույն կրթության համակարգի ղեկավար անձանց, դասախոսներին և ուսանողներին:

4. ՈԱԱԿ-ի որակի ապահովման ներքին համակարգ

Ըստ ՈԱԱԿ-ի ռազմավարական ծրագրի՝ 2014 թվականին ՈԱԱԿ-ը նախատեսում է Որակի ապահովման եվրոպական համացանցի կողմից անցնել արտաքին գնահատում: Այդ նպատակով ՈԱԱԿ-ը Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալության հետ համատեղ մշակել է ՈԱԱԿ-ի որակի ապահովման ներքին համակարգի տարրերը: Ներկայումս, իրականացվում է ինքնավերլուծության առաջին փուլը, որի արդյունքում ՈԱԱԿ-ն ամբողջությամբ պատրաստ կլինի դիմելու

Մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի լիիրավ անդամ դառնալու համար, ինչն էլ իր հերթին կնպաստի ՀՀ բուհերի կողմից շնորհվող որակավորումների ճանաչմանը և բուհերի ինտեգրմանը բարձրագույն կրթության համաեվրոպական տարածք: ՈԱԱԿ-ը պատրաստ կլինի դիմել միջազգային ճանաչմանը 2014 թվականի սեպտեմբերին:

5. Միջազգայնացում

Միջազգայնացման ոլորտում նվաճումները գրանցվել են հետևյալ ուղղություններով.

- ՈԱԱԿ-ը դիմել է ՏԵՄՊՈՒՍ-ի վեց ծրագրերի, որոնցից չորսն արժանացել է հավանության Եվրամիության կողմից և ներկայումս իրականացվում են: Ընդ որում չորսից երկուսում դրամաշնորհի ղեկավար են հանդիսանում երկու հայկական բուհեր՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանները: Ներկայումս ՈԱԱԿ-ը համակառավարում է ՏԵՄՊՈՒՍ-ի գործող հինգ ծրագիր: Ծրագրերը միտված են ամրապնդելու որակի ապահովման համակարգը, լրացնելով համակարգում գոյություն ունեցող բացերը՝ բարձրագույն կրթության ոլորտի կառավարման մասնագետների պատրաստում, որակավորոկմների սեկտորալ շրջանակների մշակում, աշխատաշուկա-բուհ կայուն կապերի ստեղծում և ամրապնդում, տարածաշրջանում որակի ապահովման միասնական մշակույթի ձևավորում:
- ՀԲ-ի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ն իրականացնում է երեք ծրագիր.
    - պետական և ոչ պետական բուհերի փորձնական հավատարմագրում,
    - բարձրագույն կրթության համակարգի որակի ապահովման ներքին համակարգի 400 մասնագետների վերապատրաստում:
    - որակի ապահովման ներքին և արտաքին համակարգերի ներուժի ձևավորմանը միտված ARQATA ծրագիրը Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալության հետ համատեղ:
- Միջազգային ծրագրերի (ՏԵՄՊՈՒՍ, ՀԲ) շրջանակներում ՈԱԱԿ-ի անձնակազմը հնարավորություն է ունեցել մասնակցելու մի շարք վերապատրաստումների, ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Վերապատրաստումների արդյունքում ՈԱԱԿ-ում ձևավորվել է համապատասխան ներուժ, որը նպաստում է հավատարմագրման գործընթացների հաջող իրականացմանը :
- ENQA–ի փորձագետի այցը՝ ՈԱԱԿ-ի փաստաթղթային հենքը ՈԱԵՉՈՒ-ի չափորոշիչների հիման վրա գնահատելու նպատակով:

Փորձագետի հաշվետվության հիման վրա փաստաթղթերում կատարվել են էական փոփոխություններ ՈԱԱԿ-ի ճանաչելիությանը նպաստելու համար:

- ՈԱԱԿ-ը շարունակում է ակտիվ մասնակցել INQAAHE և ENQA միջազգային ցանցերի զարգացումներին, մասնակցում է ENQA աշխատանքային խմբերում և ներկայացված է INQAAHE-ի կառավարման խորհրդում:

6. Զարգացման միտումներ և մարտահրավերներ

Ինչպես ՈԱԱԿ-ի նախաձեռնած մասնագիտական կրթության համակարգի որակի ապահովման գործընթացների վերլուծությունը, միջազգային փորձագետների դիտարկումները, այնպես էլ իրականացված հավատարմագրման գործընթացներն ու ուսանողների հարցման արդյունքները ցույց են տալիս, որ մասնագիտական կրթության համակարգն ունի զարգացման հետևյալ միտումները և մարտահրավերները, որոնք նշվել են նաև միջազգային փորձագետների կողմից:

ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող փորձնական հավատարմագրման գործընթացները ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատություններում փոփոխությունների իրականացման խթան են հանդիսանում և նպաստում են դրանց հնարավորությունների զարգացմանը: ՈԱԱԿ-ը դիտվում է որպես խորհրդատու և երկրում որակի ապահովման մշակույթի ձևավորման գործում միակ մարմին: Ընդհանուր առմամբ, ուսումնական հաստատությունները բավականին աշխատանքներ են իրականացնում որակի մշակույթի ձևավորման ուղղությամբ, մանավանդ այնպիսի պայմաններում, երբ որակի ապահովման տարբեր բաղադրիչներ մինչ այժմ բացակայել են: Սակայն, բնավ, չի նշանակում, որ մինչև որակի արտաքին ապահովմանը ներկայացվող պահանջների սահմանումը, ուսումնական հաստատությունները բավականաչափ ուշադրություն չեն դարձրել կրթության որակին: Այնուամենայնիվ, բացակայել են որակը խթանող համակարգված մոտեցումները և հաստատված ընթացակարգերը:

Ստորև ներկայացվում են բացահայտված խնդիրները և ձեռքբերումները ըստ ինստիտուցիոնալ հհավատարմագրման չափանիշների՝

- **կառավարում.** հաստատությունների կառավարման համակարգերն անցյալում լավ ծառայել են իրենց նպատակին: Սակայն ներկայումս դրանք կանգնած են ներքին և արտաքին նոր մարտահրավերների առջև , որոնք պահանջում են ավելի հստակ որոշումների կայացման գործընթացներ, հաշվետվողականություն, համապատասխան ռեսուրսներ և լավ տեղեկատվական համակարգեր: Քանի դեռ հաստատություններն այս փոփոխությունների իրականացման գործընթացում են, դրանք պետք է համապատասխան ջանքեր և

ժամանակ տրամադրեն իրենց կառավարչական կարողությունները բարելավելու և մոտ ապագայում կառավարման նոր համակարգ ներդնելու համար՝ շեշտը դնելով որակի ապահովման մեխանիզմների միջոցով վերհանված խնդիրների լուծմանը:

- **մասնագիտության կրթական ծրագրեր.** մասնագիտության կրթական ծրագրերը հիմնականում վերանայվել են՝ արտաքին պահանջներից ելնելով (Բոլոնիայի գործընթաց, ՈԱԱԿ-ի պահանջներ), այլ ոչ թե որպես քաղաքականություն: Լավագույն փորձը ցույց է տվել, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր ակադեմիական տարվա վերջում հիմնական գործընթացների համակարգված վերանայում (ուսանողների ձեռքբերումներ, ուսանողների կարծիք, պրակտիկայի հաշվետվություններ), որը կհանգեցնի որոշակի ճշգրտումների, բայց ոչ փոփոխությունների: Իսկ 4-5 տարին մեկ իրականացվող վերանայումը կբերի էական փոփոխությունների:
- **ուսանողներ.** ուսանողները նշում են հաստատություններում անհրաժեշտ մի քանի բարելավումներ (դասավանդման և գնահատման մեթոդներ, ենթակառուցվածք և գրադարանային ռեսուրսներ): Նրանք արժևորում են հաստատության կողմից առաջարկվող գործնական և տեսական ուսումնառությունը, սակայն գտնում են, որ այն ոչ միշտ է բավարարում իրենց կարիքները:
- **դասախոսներ՝** բուհերն ունեն բարձրակարգ, բայց տարեց դասախոսական կազմ, և դժվարությամբ են գտնում համապատասխան երիտասարդ և որակյալ մասնագետներ, քանի որ ցածր է աշխատավարձը, քիչ են ասպիրանտները, պակասում է մոտիվացիան: Այս գործոնը ոչ շատ հեռու ապագայում հաստատություններին կարող է ռիսկի տակ դնել, հետևաբար այս խնդրին լուծում պետք է տրվի: Ինչ վերաբերում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական վերապատրաստմանը, բացի առանձին դեպքերի, լայնածավալ, նպատակային և պարբերաբար իրականացվող վերապատրաստումներ տեղի չեն ունեցել,
- **հետազոտություն՝** չնայած ուսումնական հաստատությունների առաքելության մեջ հետազոտությունը նշված է որպես կարևոր բաղադրիչ, այնուամենայնիվ, առաջնահերթություն և բավարար ռեսուրսներ չեն հատկացվում հետազոտությունների համար: Բացակայում են հետազոտություն իրականացնելու ռազմավարության հստակ ուղղությունները և համակարգված մոտեցումը, ինչպես նաև հաշվետվողականությունը:
- **ֆինանսներ՝** հաստատությունների ֆինանսական ռեսուրսները հիմնականում ձևավորվում են ուսանողների վարձավճարներից, նույնիսկ այն դեպքում, երբ հաստատությունը պետական կարգավիճակ ունի, իսկ ներդրումների մեծ մասը կատարվում է միջազգային համագործակցությունների արդյունքում: Բացակայում է ուսումնական հաստատությունների եկամուտի աղբյուրների ձևավորման

համակարգված մոտեցումը, ինչը վտանգում է ուսումնական հաստատությունների կայուն զարգացումը:

- **հասարակական պատասխանատվություն՝** բուհերը ինչպես և աշխարհում շատ այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ, երկար տարիներ աշխատել են մի մոդելով, որը չի ապահովել արտաքին հաշվետվողականություն: Եվրոպական բուհում հաշվետվողականության մեխանիզմները ձևավորել են շուրջ 20 տարի առաջ, իսկ ՀՀ –ում այն նոր է սկսել ձևավորվել և գործում է որակի արտաքին ապահովման պահանջներին և Բոլոնիայի գործընթացին համապատասխանելու ուղղությամբ և ներկայումս հաշվետվողականության կայուն մեխանիզմները գտնվում են մշակման փուլում:
- **որակի ապահովում՝** բուհերը՝ ելնելով մրցակցային դրդապատճառներից, կարևորում և մեծ պարտավորվածություն են ցուցաբերում կրթության որակի և որակի ապահովման նկատմամբ, տրամադրում են անհրաժեշտ ռեսուրսներ այս գործընթացների իրականացման համար: Կարևոր է, որ այս ուղղությամբ նրանք ցուցաբերում են շարունակական մոտեցում և ինստիտուցիոնալ մակարդակով հիմքեր են ստեղծում որակի ներքին կառավարման համար, որակի ապահովումը դարձնելով բոլոր շահակիցների և բոլոր ստորաբաժանումների պատասխանատվությունը:

Հաստատությունները ինքնավերլուծության արդյունքում ի հայտ եկած բոլոր խնդիրներին միաժամանակ անդրադառնալ չեն կարող, սակայն, դրանք կարող են ներառվել բուհերի երկարաժամկետ պլաններում:

ՈԱԱԿ-ը հաստատություններին ցուցաբերում է մեծ օգնություն՝ ուղղորդելով վերջիններիս տեղեկատվության հիման վրա համակարգի կառավարման մեխանիզմների ներդրման գործընթացում: